

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

*МАТЕРИАЛЫ ЮБИЛЕЙНОЙ НАУЧНОЙ СЕССИИ,
ПОСВЯЩЕННОЙ 95-ЛЕТИЮ ОСНОВАНИЯ ЕГУ*

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

*MATERIALS OF THE SCIENTIFIC SESSION
DEDICATED TO THE 95TH ANNIVERSARY OF YSU*

1.6 (9)

Общественные науки - Social sciences

(Теология, востоковедение, история)

(Theology, Oriental studies, History)

ЕРЕВАН - YEREVAN

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS

2015

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

*ԵՊՀ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 95-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԵՐ*

1.6 (9)

*Հասարակական գիտություններ
(Աստվածաբանություն, արևելագիտություն, պատմություն)*

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2015

Հրատարակվում է
ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

պ. գ. դ., պրոֆ. Յ. Մարգարյան
պ. գ. դ., պրոֆ. Յ. Աբրահամյան
պ. գ. դ., պրոֆ. Ա. Ստեփանյան
պ. գ. դ., պրոֆ. Յ. Ավետիսյան
ա. գ. դ., պրոֆ. Լ. Չուգասզյան
բ. գ. դ., պրոֆ. Գ. Ասատրյան
պ. գ. թ., պրոֆ. Պ. Հովհաննիսյան
բ. գ. թ., պրոֆ. Գ. Մելիքյան

պ. գ. թ., պրոֆ. Ա. Սաֆարյան
պ. գ. թ., դոց. Յ. Գրիգորյան
պ. գ. թ., դոց. Է. Չոհրաբյան
պ. գ. թ., դոց. Ա. Բալյան
պ. գ. թ., դոց. Լ. Հարությունյան
բ. գ. թ., դոց. Ռ. Մելքոնյան
բ. գ. թ., դոց. Վ. Ոսկանյան

Редакционная коллегия:

д. и. н., проф. А. Маргарян
д. и. н., проф. Г. Абрамян
д. и. н., проф. А. Степанян
д. и. н., проф. А. Аветисян
д. и. н., проф. Л. Чугасзян
д. ф. н., проф. Г. Асатрян
к. и. н., проф. П. Ованисян
к. ф. н., проф. Г. Меликян

к. и. н., проф. А. Сафарян
к. и. н., доц. О. Григорян
к. и. н., доц. Э. Зограбян
к. и. н., доц. А. Балян
к. и. н., доц. Л. Арутюнян
к. ф. н., доц. Р. Мелконян
к. ф. н., доц. В. Восканян

Editorial Board

DSc, prof. H. Margaryan
DSc, prof. H. Abrahamyan
DSc, prof. A. Stepanyan
DSc, prof. H. Avetisyan
DSc, prof. L. Chugaszyan
DSc, prof. G. Asatryan
PhD, prof. P. Hovhannisyann
PhD, prof. G. Melikyan

PhD, prof. A. Safaryan
PhD, associate prof. H. Grigoryan
PhD, associate prof. E. Zohrabyan
PhD, associate prof. A. Balyan
PhD, associate prof. L. Harutyunyan
PhD, associate prof. R. Melkonyan
PhD, associate prof. V. Voskanyan

Հրատ. պատասխանատու խմբագիր՝ ***Ս. Սալխասյան***

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55-55-70, publishing@ysu.am

Հրատարակության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ուսանողական գիտական ընկերություն

Հասցե՝ ք. Երևան, Ա. Մանուկյան 1, (+37460) 71-01-94, ssspуб@ysu.am, sss@ysu.am

ԵՊՀ ՌԻԳԸ հրատարակումների կայք՝ ssspуб.yсу.am

ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՃՔԱՅԻՆ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ ՍՄԲԱՏ Ա ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ՕՐՈՔ

Սմբատ Ա Բագրատունու գահակալության օրոք տեղ գտած մի շարք իրադարձություններ, ինչպես՝ հայ Բագրատունիների միասնական տերությունից Վասպուրականի թագավորության անջատումը, հայոց արքայի անհաջող պայքարը Ատրպատականի ամիրա Յուսուֆի դեմ և, ի վերջո, նրա նահատակությունը, կարծես ստվեր են գցում Բագրատունի այս արքայի թագավորության ողջ շրջանի վրա: Այդ հանգամանքը խիստ բացասական ազդեցություն է թողնում Սմբատ Ա-ի գործունեության գնահատման վրա: Պատահական չէ նրան տրված «Նահատակ պատուադիր անունը»¹, որը, լինելով վերը նշված իրողության հետևանքը, ոչ մի աղերս չունի Սմբատ Ա-ի իրական ռազմաքաղաքական վաստակի հետ: Ստորև կանդախտանալով Սմբատ Ա-ի տարածքային նվաճումներին ու մի շարք հարակից հարցադրումներին, որոնք վճռական նշանակություն ունեն այս արքայի նահատակի կերպարի հաղթահարման գործում:

890 թ. Աշոտ Ա Բագրատունու մահվանը հաջորդեց ներքաղաքական լուրջ ճգնաժամ: Թեպետ Արշակունյաց ժամանակաշրջանից ժառանգված քաղաքական ավանդույթը² նախատեսում էր հայրական գահի անցումն ավագ որդուն, այնուհանդերձ Սմբատ Ա-ի արքայական իրավունքները վիճարկվեցին նրա հորեղբայր Աբաս սպարապետի կողմից: Ի վերջո, վերջինս տեղի է տալիս, և Սմբատը, տանելով իր գահակալության առաջին հաղթանակը, հաստատվում է հոր գահին³:

890-ական թթ. առաջին կեսը Սմբատ Ա-ի համար պակաս բարենպաստ էր արտաքին քաղաքական առումով: Արաբական խալիֆայության վերահսկողությունը լիովին վերացված չէր, իսկ Ատրպատականի Ավշին ամիրան էլ ստացել էր Հայաստանից հարկեր հավաքելու իրավունք: Այս պայմաններում հայոց արքան տպավորիչ ձեռքբերում արձանագրեց՝ 893 թ. տիրելով Դվինին: Հովհաննես Դրասխանակերտցին Դվինում որպես «գլխաւոր ոստիկանք և հրամանատարք քաղաքին» իշխատակում է Սահմետ և Ումայի եղբայրներին⁴, որոնք, ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի, քաղաքում հաստատվել էին Աշոտ Ա-ի թագավորության վերջին տարիներին կամ Սմբատ Ա-ի թագավորության սկզբում⁵: Նրանք ապստամբություն բարձրացրին հայոց արքայի դեմ՝ հրաժարվելով շարունակել վասալական պարտականությունների կատարումը՝ հարկերի վճարումն ու գորքերի տրամադրումը: Միայն շուրջ 2 տարի ձգված պաշարման շնորհիվ հնարավոր եղավ կոտրել ապստամբների դիմադրությունը: Փախուստի ճանապարհին

¹ Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, սյ. 1203:

² Արշակունյաց թագավորության հետ հաջորդական կապի հիմնավորումն այնքան էական էր, որ դարձել է Հովհաննես Դրասխանակերտցու պատմական հայեցակարգի առանցքային դրույթը: Տե՛ս Դարբինյան-Մելիքյան Մ., Հովհաննես Դրասխանակերտցու պատմական կոնցեպցիան, «ՊԲՀ», 1983, թ. 3, էջ 119-125:

³ Հովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմութիւն Հայոց, քնն. քննադիրը՝ Մ. Եմինի, Երևան, 1996, էջ 146-150:

⁴ Նույն տեղում, էջ 164:

⁵ Տեր-Ղևոնդյան Ա., Դվին քաղաքի ժամանակագրությունը 9-10-րդ դարերում, «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, թ. 10, էջ 13:

արաբ եղբայրները ձերբակալվեցին և ուղարկվեցին «առ կայսր Լևոն երկաթե շղթա-
յիւքն»¹: Այսպիսով, իր գահակալության առաջին իսկ տարիներին Սմբատ Ա-ն լուրջ
հաջողության հասավ՝ արթունի տիրույթներին միացնելով Դվինը՝ հարակից շրջաննե-
րով: Ռազմական խոշոր հաղթանակ լինելուց բացի՝ դա նաև առևտրատնտեսական
գարգացման լայն հնարավորություններ էր բացում հայոց թագավորության առաջ²:

893 թ. Դվինի գրավմանը հաջորդեց նաև Կարինի շրջակայքի միացումը Բագրա-
տունիների արթունի տիրույթներին: Ինչպես հայտնի է, Սմբատ Ա-ն առևտրական
պայմանագիր էր կնքել Բյուզանդիայի հետ³: Չեզոք դիրք զբաղեցնելով միմյանց դեմ
անընդհատ պատերազմող Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրու-
թյան միջև՝ Բագրատունյաց Յայաստանը միջազգային առևտրի ասպարեզում ձեռք էր
բերում կարևոր տարանցիկ երկրի դեր⁴: Պայմանագրի կնքումից հետո վերագործարկ-
վեց Դվին-Տրապիզոն մայրուղին, որի անվտանգության ապահովումն անհրաժեշտա-
բար մղում էր տարածքային նոր նվաճումների: Այսպես, մայրուղին անցնում էր Բասեն
ու Կարին գավառներով, որոնցում հաստատվել էին արաբական գաղութներ: Մի կող-
մից՝ Անանուն Չրուցագրի վկայությունը Սմբատ Ա-ի կողմից Բասենի գրավման վերա-
բերյալ⁵, մյուս կողմից էլ՝ Կոստանդին Ծիրանածնի հաղորդումը Բասենի ու Կարինի
շրջանների ասպատակությունների մասին⁶ Ա. Եղիազարյանին մղել են ենթադրելու,
որ հայ-բյուզանդական միացյալ ուժերը, ձեռնամուխ լինելով վերը նշված մայրուղու
անվտանգության ապահովմանը, գրավել են Բասենն ու Կարինի շրջակայքը⁷: Կայս-
րությունը երկիցս (895 թ., 902 թ.) փորձ է կատարել գրավելու նաև Կարևո բերդը, սա-
կայն անհաջողության է մատնվել⁸: Այսպիսով, սկզբնաղբյուրների հաղորդած տեղե-
կությունները հնարավորություն են տալիս խիստ հավանական համարելու Կարինի
շրջակայքի միացումը արթունի տիրույթներին:

Հետաքրքրական է, որ մի քանի արաբ պատմագիրներ հաղորդում են Տրապիզո-
նի՝ Յայոց տերությանը պատկանելու մասին⁹: Այնուամենայնիվ խոստովանենք, որ
հայկական ու բյուզանդական սկզբնաղբյուրներում նման տեղեկության բացակայու-
թյունը հնարավորություն չի տալիս միանգամայն ընդունելի համարելու նշված նավա-
հանգստի պատկանելությունը հայոց թագավորությանը:

Սմբատ Ա Բագրատունու մղած պայքարի հաջորդ դրվագը կապված է Տարոնի
հետ: Միջագետքում հաստատված Շայբանիների տոհմից Ահմադը, վերջ տալով
Արզնի ամիրայության գոյությանը, իր տիրույթներին միացրեց Աղձնիք նահանգի տա-
րածքը: Ապա ամիրան հանդես եկավ նաև Տարոնին տիրելու հավակնություններով:
Օգտվելով Վասպուրականի իշխանների ներքին տարածայնություններից՝ Ահմադ
Շայբանին իր կողմը գրավեց և՛ Գագիկ Աբումրվանին, և՛ վերջինիս գործողություննե-
րից դժգոհողներին¹⁰: Սմբատ Ա-ն, որը քաղաքական նկատառումներով ստանձնել էր
Գագիկ Աբումրվանին հովանավորելու գործը, զրկվեց ենթակա իշխանների աջակցու-

¹ **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 164:

² Դվինի գրավման մասին մանրամասն տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Արաբական ամիրայությունները Բագրա-
տունյաց Յայաստանում, Երևան, 1965, էջ 112-116: **Եղիազարյան Ա.**, Յայ Բագրատունիների տերությունը
(885-908 թթ.), Երևան, 2011, էջ 236-238:

³ **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 160-162:

⁴ **Манандян Я.**, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954,
с. 201-203.

⁵ Պատմութիւն Անանուն զրուցագրի. կարծեցեալ Շապուհ Բագրատունի, Երևան, 1971, էջ 159:

⁶ **Կոստանդին Ծիրանածին**, «Օտար աղբյուրները Յայաստանի ու հայերի մասին», հ. 6, թարգմ.՝ Զ. Բար-
թիկյանի, Երևան, 1970, էջ 14-15:

⁷ **Եղիազարյան Ա.**, էջ 248, 88, ծան. 3:

⁸ **Կոստանդին Ծիրանածին**, էջ 14-15:

⁹ Արաբ պատմագիրների վկայությունների թարգմանությունը տե՛ս **Եղիազարյան Ա.**, էջ 54-55:

¹⁰ **Վարդանյան Վ.**, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, Երևան, 1969, էջ 140-147:

թյունից Շայբանի ամիրայի դեմ մղվելիք պայթարում: Ի վերջո, 896 թ. Թուղխ գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Գագիկ Աբումովանի դավաճանության պատճառով հայկական զորքը պարտություն կրեց՝ տալով 5000 սպանված¹: 2 տարի անց՝ ամիրայի մահից հետո, Տարոնի իշխանությունն ազատվում է արաբական գերիշխանությունից²: Դրանից հետո Տարոնի Գրիգոր իշխանը, իշխող տեսակետի համաձայն, լիովին անկախ էր³ կամ գրեթե չէր ենթարկվում Սմբատ Ա-ին⁴: Մինչդեռ ըստ Անանուն Չրուցագրի վկայության՝ Տարոնի իշխաններ Գրիգորն ու Գագիկը մասնակցել են Սմբատ Ա-ի արքազական արշավանքին⁵: Այդ հանգամանքը դիտարկելով որպես վասալական պարտականության կատարում՝ ուսումնասիրողներից մեկը կարծիք է հայտնել, որ Տարոնի իշխանությունը շարունակել է գտնվել Յայոց տերության կազմում⁶, ուստի, Սմբատ Ա-ի տերության հարավային սահմանների վերաբերյալ ուղղակի վկայություններ չունենալով⁷, առավել հակված ենք կարծելու, որ Բագրատունյաց թագավորությունը 898 թ. հետո հարավում ընդգրկել է նաև Տարոնը:

Առանձնակի կարևորություն է ներկայացնում Սմբատ Ա-ի և երկրում հաստատված արաբական ամիրայությունների փոխհարաբերությունների հարցադրումը: Եթե Աշոտ Ա-ի օրոք վերջիններս ընդունեցին հայոց թագավորի գերիշխանությունը, ապա Բագրատունի հաջորդ արքայի գահակալմամբ իրավիճակը փոխվեց: Մի կողմից՝ ամիրայությունները, փորձելով օգտվել Սմբատ Ա-ի և Սաջյան ամիրաների հակամարտությունից, աջակցություն էին ցուցաբերում Ատրպատականին, մյուս կողմից էլ՝ հայոց արքան էր վճռական պայթարի ելել արաբական ամիրայությունների դեմ որոշ դեպքերում հետապնդելով անգամ դրանց վերացման նպատակ: Սմբատ Ա-ի հաղթանակը կատարյալ էր հատկապես Դվինի ու Կարինի ամիրայությունների դեմ պայթարում: Իսկ ինչ վերաբերում է կայսիկների ու ութմանիկների ամիրայություններին, ապա Սմբատն այս հարցում առաջնորդվում էր վերջիններիս հնարավորինս թուլացնելու նկատառումով: Այս առումով հատկանշական է Անանուն Չրուցագրի վկայությունը. «Եւ զի էր մի Տաճիկ, և անուն նորայ Ապուհեճր, (Սմբատ Ա-ն - Ս. Բ.) տայր գերդըն Բերկոյ: Եւ տայր զքաղաքն Արճեշ Տաճիկ մի, որ եկեալ էր ի Դարբանդ քաղաքէ... Եւ զՃաղկոտն գաւառն Էրետ Տաճիկ մի այլ»⁸: Առաջին հայացքից նշված շրջանների տերերի փոփոխությունը էական նշանակություն չունի, քանի որ երկու դեպքում էլ իշխողներն արաբներ են: Իրականում, սակայն, Սմբատ Ա-ն իր այդ քայլով լուծում էր միանգամից 2 կարևոր խնդիր: Նախ՝ կայսիկներին պատկանող տիրույթները սեփական նախաձեռնությամբ հանձնելով այլ արաբ գործիչների՝ հայոց արքան իր անվերապահ ու բացարձակ գերիշխանությանն էր ենթարկում այս ամիրայությունը: Եվ երկրորդ՝ Սմբատ Ա-ն լուրջ հակամարտություն էր հրահրում արաբական կազմավորումների միջև: Օրինակ, Արճեշը հանձնելով Դերբենդում և նրա շրջակայքում հաստատված արաբներին, որոնք պատկանում էին արաբների հարավային ցեղախմբին և թշնամի էին հյուսիսային ցեղախմբի արաբներին, այդ թվում՝ կայսիկներին, հայոց ար-

¹ **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 176-178: **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց, բնագիրը՝ Վ. Վարդանյանի, Երևան, 1985, էջ 366-368:

² Տարոնի համար մղված պայթարի մասին մանրամասն տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Արաբական ամիրայությունները..., էջ 116-120: **Գրիգորյան Գ.**, Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը 9-10-րդ դարերում, Երևան, 1983, էջ 124-125:

³ «Յայ ժողովրդի պատմություն», հ. 3, Երևան, 1976, էջ 84:

⁴ **Գրիգորյան Գ.**, էջ 125:

⁵ **Անանուն Չրուցագիր**, էջ 189:

⁶ **Եղիազարյան Ա.**, էջ 106:

⁷ Հովհաննես Դրասխանակերտցին նկարագրում է Յայոց տերության արևմտյան, հյուսիսային և արևելյան սահմանները՝ ոչինչ չհաղորդելով հարավայինի մասին: Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 164:

⁸ **Անանուն Չրուցագիր**, էջ 161:

բան, այդպիսով, Վանա լճի շրջանի արաբական գաղութների դեմ լուրջ հակակշիռ էր ստեղծում: Նույն նպատակով Սմբատ Ա-ն Բերկրին հանձնեց ութմանիկներին՝ խիստ սրելով լարվածությունն ու թշնամանքը վերջիններիս ու կայսիկների միջև¹:

Հիշատակելի է հայոց արքայի կողմից կայսիկների ամիրայության ապստամբության ճնշումը Արծրունիների վճռական օժանդակությամբ²: Ինչպես իրավացիորեն նկատել է Յ. Մարգարյանը, Սմբատ Ա-ն դրանով «թե՛ հանդես էր գալիս հայկական բուլոլ ուժերը միավորողի ու համախմբողի դերում... և թե՛ դրսևորում էր գերագույն սյուզերենի իրավունքները նաև օտարազգի իշխողների նկատմամբ»³: Ինչպես այս, այնպես էլ Նախիջևանի ճակատագրին առնչվող 902-904 թթ. անցուդարձերի ժամանակ Ատրպատականի ամիրա Յուսուֆի անգործությունը վկայում է հայոց արքայի ռազմաքաղաքական հզորության կտրուկ վերելքի մասին: Փաստորեն, Սմբատ Ա-ն լուրջ ձեռնարկումներով նշանակալի հարված հասցրեց իր տերության կազմի մեջ մտնող արաբական ամիրայություններին՝ վերացնելով կամ զգալիորեն թուլացնելով դրանք:

Սմբատ Ա-ի տարածքային ձեռքբերումների պարզաբանման առումով հիշատակության է արժանի Անանուն Չրուցագրի մեկ այլ հաղորդում ևս. «Ալմպատ Էառ աշխարհն Ղլաթայ և շինեաց ինքն բերդ»⁴: Պարզվում է, որ հայոց արքան տիրել է նաև Խլաթին և իր ներկայությունը ավելի հաստատուն ու ազդեցիկ դարձնելու միտումով այնտեղ կառուցել մի բերդ՝ հավանաբար թողնելով նաև կայազոր: Սմբատ Ա-ի նվաճած տարածքների շարքում Անանուն Չրուցագիրը հիշատակում է նաև Յարքն ու Ապահունիքը⁵: Հայոց արքայի կողմից Յարքի գրավման մասին վկայություն ունի նաև Կոստանդին Ծիրանածինը⁶, ուստի կասկած չպետք է հարուցի նաև Յարքի ու Ապահունիքի առնվազն մի մասի միացումը Բագրատունիների արքունի տիրույթներին:

Սմբատ Ա-ի գահակալության շրջանի առանցքային իրադարձություններից է աքխազական արշավանքը: Քանի որ դրա մասին արդեն իսկ հանգամանորեն գրվել է⁷, ուստի այստեղ կարիք չկա դրան անդրադառնալու: Միայն նշենք, որ շուրջ 906 թ. տեղի ունեցած այդ արշավանքը, որի մասին հաղորդում են Հովհաննես Դրասխանակերտցին⁸, Անանուն Չրուցագիրն⁹ ու Վրաց մատյանը¹⁰, հանգեցրեց Հայոց տերության գերիշխանության ընդունմանը Աքխազաց թագավորության կողմից¹¹: Այսպիսով, Սմբատ Ա-ի օրոք Հայոց տերության ազդեցության ոլորտն ընդլայնվեց հյուսիսում՝ ընդգրկելով Սև ծովի արևելյան ափին տարածվող Աքխազաց թագավորությունը: Հյուսիսային սահմանների պարզաբանումը շարունակելով՝ նշենք, որ, ըստ Ա. Մելքոնյանի, Գուգարքը ևս հայ Բագրատունիների տերությանն է կցվել Սմբատ Ա-ի օրոք¹²:

Սմբատ Ա-ի տարածքային նվաճումների շարքում է նաև Ամյուկ ամրոցը: Անանունի հաղորդման համաձայն՝ Վասպուրականի գահերեց իշխան Գագիկ Արծրունին ութմանիկներից խլում է Ամյուկը, ինչին հաջորդում է ամրոցի գրավումը թագավորա-

¹ Եղիազարյան Ա., էջ 240-243:

² Թովմա Արծրունի և Անանուն, էջ 380-382: Այս մասին մանրամասն տե՛ս Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները..., էջ 120-124:

³ Մարգարյան Յ., Բագրատունի թագավորների «Տիեզերակալ» տիտղոսը, «Հայոց պատմության հարցեր», հ. 6, Երևան, 2005, էջ 105:

⁴ Անանուն Չրուցագիր, էջ 171:

⁵ Նույն տեղում, էջ 159:

⁶ Կոստանդին Ծիրանածին, էջ 11:

⁷ Տե՛ս Եղիազարյան Ա., էջ 55-61:

⁸ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 202-204:

⁹ Անանուն Չրուցագիր, էջ 189-193:

¹⁰ «Матиане Картлиса», пер. М. Лордкипанидзе, Тбилиси, 1976, с. 32.

¹¹ Եղիազարյան Ա., էջ 55-61:

¹² Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդում, Երևան, 2003, էջ 48-49:

կան զորքերի կողմից: Ի ցույց դնելով իր ռազմաքաղաքական հզորությունը՝ Սմբատը շուտով Ամյունը վաճառում է այն գրաված Գագիկ Արծրունուն¹:

Նկատենք, որ Սմբատ Ա-ի տարածքային ձեռքբերումների շարքը կարող է համարվել Անանուն Չրուցագրի այլ վկայությունների շնորհիվ, միայն թե դրանք պետք է ենթարկել խոր քննության՝ խուսափելով դրանց անվերապահ ընդունումից: Այս հարցի շուրջ կարևոր տեղեկություններ կարող է հաղորդել նաև Մուշի Սբ. Աղբերիկ վանքի մի ձեռագիր², որի տվյալները ևս կարիք ունեն հանգամանակից հետազոտության: Փաստորեն, Սմբատ Ա-ի նվաճումների ամբողջական պատկերի ստացումը կարող է արդյունք լինել միայն ավելի խորագնին ուսումնասիրության:

Այսպիսով, Սմբատ Ա Բագրատունու տարածքային նվաճումների հետազոտությունը երևան է հանում հայոց արքայի ռազմաքաղաքական իրական վաստակը, որը ոչ մի աղբյուր չունի նրան տրված Նահատակ մականվան հետ: Այս համատեքստում միանգամայն հասկանալի է դառնում, որ Բագրատունի արքաներից հենց նա է առաջինը կրել Տիեզերակալ³ տիտղոսը՝ արժանավոր տեղ գրավելով հայոց գահակալների շարքում:

Սարգիս Բաղդարյան

ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՍՄԲԱՏ Ա ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ՕՐՈՑ

Բանալի բառեր՝ Կարծեցյալ «Նահատակը», հաջորդական նվաճումներ, տարածքային ընդարձակում, հայ-բյուզանդական համագործակցություն, ամիրայությունների ոչնչացում կամ թուլացում, «Նահատակ», թե՞ «Տիեզերակալ»

Յոդվածի նպատակն է Սմբատ Ա Բագրատունու տարածքային ձեռքբերումների հնարավորինս ամբողջական պատկերի ստացումը, որը շոշափելի նշանակություն ունի այս արքայի պատմական դերի գնահատման գործում: Փորձ է կատարվել հաղթահարել այնպիսի դժվարություններ, ինչպիսիք են սկզբնաղբյուրների արժանահավատության հարցադրումն ու տարբեր հետազոտողների տեսակետների տարամիտումը: Ուսումնասիրությունը հանգել է եզրակացության, որ Սմբատ Ա-ի Նահատակ մականունը ամենևին էլ չի համապատասխանում նրա ռազմաքաղաքական իրական վաստակին, ուստի ավելի տեղին է Բագրատունի այս արքայի՝ որպես հմուտ ռազմական գործիչ հիշատակումը նրա ունեցած Տիեզերակալ տիտղոսի հետ մեկտեղ:

Саркис Балдарян

ТЕРРИТОРИАЛЬНОЕ РАСШИРЕНИЕ АРМЯНСКОГО ЦАРСТВА ПРИ СМБАТЕ I БАГРАТИДЕ

Ключевые слова: мнимый «Мученик», последовательные завоевания, территориальное расширение, армяно-византийское сотрудничество, уничтожение или ослабление эмиратов, «Мученик» или «Завоеватель Вселенной»

Статья преследует цель получить по возможности наиболее полное описание территориальных завоеваний Смбата I Багратида, потому что его завоевания имеют важное значение в оценке исторической роли этого царя. В числе трудностей, преодоленных нами при проведении исследования, следует отметить установку достоверности первоисточников, а также несовпадение мнений разных исследователей. В результате исследования мы пришли к выводу, что прозвище Смбата I «Мученик» не соответствует его реальной военно-политической заслуге. Поэтому более уместно упоминание Смбата I вместе с его титулом «Завоеватель Вселенной» («Тиезеракал»).

¹ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 434-436:

² Գովսեփյան Գ., Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 179-188:

³ Տիտղոսի մասին հանգամանորեն տե՛ս Սարգարյան Յ., էջ 98-109:

Sargis Baldarian

**TERRITORIAL EXPANSION OF THE ARMENIAN KINGDOM
IN THE REIGN OF SMBAT I BAGRATUNI**

Keywords: supposed "Martyr", consecutive conquests, territorial expansion, abolishment or collapse of emirates, Armenian-Byzantine cooperation, "Martyr" or "Master of the Universe"

The purpose of the article is to get the possible complete image of the territorial achievements of Smbat I Bagratuni, which is of tangible significance to assess the historical role of this king. The author has tried to overcome difficulties, such as the problem of trustworthiness of sources and the divergence of different authors' points of view. The research has come to the conclusion that the nickname 'Martyr' of Smbat I Bagratuni does not anyhow coincide with his genuine military achievements. Hence, it is more decent to mention this king along with his title of 'The Master of the Universe' for being a proficient military figure.